

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ



ՌՈՆ ԶՕՐԱՊԵՏ

ՌՈՆ ԶՕՐԱՊԵՏ

Ռոն՝ որուն համբաւն հնչեցաւ ամենայն ուրեք և անունն ծանօթացաւ աշխարհի, ծնած է ՚ի քուլպէրկ, յամին 1803 ապրիլի 30. Մտաւ նախ 1816ին զեռ. ՚ի մատաղ հասակի՝ քուլմի զինուորական վարժանոցը, ուսկից ան-

ցաւ յետ երկուց ամաց ՚ի Պետլին, ուր յաջողամտութեամբն իւրով քիչ ժամանակի մէջ յառաջադիմելով ՚ի զինուորականին մեծաքայլ, ընդունեցաւ յամին 1821 վկայագիր սպայի: Սկսեալ յամէ 1824 մինչև ցամա 1826 Պետլինի զինուորական դպրոցը յաճախեց, և ապա մտաւ հեծելազօրաց հնգերտասաներորդ գնդին մէջ:

Այխարհագրական ու գինուորական գիտութեանց վրայ մէկ քանի արժանաւոր գրուածքներ հրատարակեց, որոց մէջ առաջին ու զլիաւոր տեղին ունի՝ Զինուորական Տեղագրութիւնը Եւրոպայից բառածն, տունայ 'ի լոյս յամին 1837, յորում կը տեսնուի մեծ հմտութիւն այխարհագրական և գինուորական :

Պետլինու գինուորական վարժանուցին մէջ քիչ մ'ատեն ամենայն գովութեամբ ուսուցչի պաշտօն վարելէն ետքը, վերադարձաւ իր զօրագունդը, և 1832ին զրկուեցաւ Բրուսիոյ տէրութեանէն Պեճիոյ սահմանագլուխը քննելու և ապահովելու համար, որ յայնժամ դեռ ևս խռովութեան մէջ էր յետ յեղափոխութեան :

Նոյնպէս և ուրիշ բազում առթից մէջ զինուորական գեղեցիկ ապագայ և մեծ յարմարութեան ցոյց տալով, 1835ին հազարապետ կոչեցաւ և յաջորդ տարին զօրապետ : Ինքը սորվեցուց ֆրեզերիկոս կարողու իշխանին ռազմագիտութիւն և այխարհագրութիւն . և ապա 1846ին ընկերեց նմա Պոնն քաղաքին համալսարանը . ինչպէս նաև աւելի ետքը ուրիշ կողմը, երբ ֆրեզերիկոս կարողու իր սորված ուսումներն կատարելագործելու համար կը ճանապարհորդէր զանազան կողմեր :

1848ին մայիս ամսոյն մէջ բանակին ութերորդ գնդին զօրագլուխ անուանեցաւ, և նոյն պաշտօնի ուղղեց Պատենի մեծ զբսութեան մէջ եղած զօրագնդին գործերն : Իսկ 1850ին ետեղապահ գնդապետի և երեսուներորդ զօրաբաժնին հրամանատարութեան աստիճան ընդունեցաւ . և 1856ին բարձրացաւ 'ի պատիւ բարձրաստիճան զօրապետութեան . և 1859ին նախագահ բազմեցաւ բանակին վերակազմութեան ժողովոյն :

Բայց Ռոն զօրապետին անունը փառաւորոյն աւելի 1870 ամին պատերազմն եղաւ, յորում տեսնուեցաւ գինուորական զօրաւոր կազմութիւն մը

ու կարգաւորութիւն, որ Ռոն զօրապետին արդիւնքն է, զի էր այն ատեն պաշտօնեայ պատերազմի 'ի Բրուսիա : Զիք տարակոյս որ 1866 և 1870 ամաց պատերազմունքն ամեն գինուորական ազգաց մտադրութիւնը առ ինքեանս դարձուցին, ուսանել անդ ռազմայարդարնոր գիտութիւն և մուծանել իրենց բանակին մէջ հիմնական փոփոխութիւններ . ուստի գինուորական կրթութիւնն հասարակաց դատտարակութեան զլիաւոր մասերէն մէկն եղաւ, որպէս զի հայրենիքն 'ի ժամ պատերազմի զամենայն որդիս իւր կամ զբազաբացիս մէկմէկ գինուոր տեսնայ : Բաց ասկէ գինուորական գրութիւնն իսկ էական կերպարանափոխութիւն կրեց . անանկ որ գրեթէ բոլորովին վերցաւ զրամով կամ փոխանակութեամբ գինուորութենէ ազատին : 1870 ամին պատերազմը թէպէտ արիւնահեղ և տխուր՝ բայց օգտակար զաս մ'եղաւ ամեն գինուորական ազգաց :

Ն Ա Ք Ո Ւ Ե Ո Ն Պ :

Քանի մը խօսք ալ նարդլեննի ներքին քաղաքագիտութեան վրայ բանք, որ բոլորովին համաձայն գտաւ իր յամին 1839 հրատարակած գաղափարացը, այսինքն տիրապետական՝ ըստ սահմանադրութեան, և ռամկապետական՝ ըստ վարչութեան : Սահմանադրութիւնը կայսեր ձեռքը անսահմանափակ իշխանութիւն մը կու տար, և կը ջնջէր սպազութեան ազատութիւնը և ժողով գումարելու իրաւունքը, կ'ուղղէր ընդհանրական բուհարկութեան ընտրութիւնները, և կը նուաճէր զամենայն խռովութիւնս 'ի ձեռն զօրութեան բանակին, կղերին և ատենից : Յայտնի է

1 Տես ԱՍ հատոր, էրես 283.